ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի

2025թ. փետրվարի 17-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Հ.Խաչիկյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա ուսուցման մագիստրատուրայի՝ 2023-2024 մագիստրոսական թեզերի եզրափակիչ ատեստավորման ընթացքի և արդյունքների ամփոփում (զեկ՝ եզրափակիչ ատեստավորմանհանձնաժողովների նախագահներ):
2. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական ևգիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ասատրյան):
3. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:
4. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:
5. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին Ուիլավ Վ.Վիսսի անվան «Միջազգային առևտրային արբիտրաժ» միջազգային դատախազի տարածաշրջանային փուլին ԵՊՀ թիմի կազմում մասնակցելու համար միանվագ անվանական կրթաթոշակ սահմանելու մասին
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Առկա ուսուցման մագիստրատուրայի՝ 2023-2024 մագիստրոսական թեզերի եզրափակիչ ատեստավորման ընթացքի և արդյունքների ամփոփում (զեկ՝ եզրափակիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ասատրյան):

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Ասատրյանը հիմնական գծերով ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում աբիոնի ծավալած գործունեությունը, ունեցած նվաճումներն ու առկա խնդիրները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Հ.Խաչիկյանը

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփումից հետո ստացված արդյունքները, այն է՝

1-ին կուրս՝ 155 ուսանող (պարտք ունեցող ուսանողների թիվը 53, առաջադիմությունը՝ 65.8%)

2-րդ կուրս՝ 177 ուսանող (պարտք ունեցող ուսանողների թիվը 88, առաջադիմությունը՝ 50.2%)

3-րդ կուրս՝ 190 ուսանող (պարտք ունեցող ուսանողների թիվը 96, առաջադիմությունը՝ 49.5%)

4-րդ կուրս՝ 190 ուսանող (պարտք ունեցող ուսանողների թիվը 111, առաջադիմությունը՝ 41.5%)

5-րդ կուրս՝ 75 ուսանող (պարտք ունեցող ուսանողների թիվը 75, առաջադիմությունը 92%)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Օսիպյան Լիանա (բակալավրիատ, 4-րդ կուրս)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.

2. Չոլաքյան Հակոբ (բակալավրիատ, 4-րդ կուրս)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ.

3. Սերոպյան Լիլիթ (մագիստրատուրա, 1-ին կուրս), Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակ.

4. Մովսիսյան Էդվարդ (մագիստրատուրա, 1-ին կուրս)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վլադիկ Ներսիսյանցի անվան կրթաթոշակ.

5. Բաբախանյան Անահիտ (մագիստրատուրա, 1-ին կուրս)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ:

5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին Ուիլյամ Վ.Վիսսի անվան «Միջազգային առևտրային արբիտրաժ» միջազգային դատախազի տարածաշրջանային փուլին ԵՊՀ թիմի կազմում մասնակցելու համար միանվագ անվանական կրթաթոշակ սահմանելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին Ուիլյամ Վ.Վիսսի անվան «Միջազգային առևտրային արբիտրաժ» միջազգային դատախազի տարածաշրջանային փուլին ԵՊՀ թիմի կազմում մասնակցելու համար միանվագ 25000-ական ՀՀ դրամի չափով անվանական կրթաթոշակ սահմանել հետևյալ ուսանողների համար.

Անաստասիա Միքայելի Հայրապետյան – բակալավրիատի 2-րդ կուրս

Էրիկ Հմայակի Մանուկյան – բակալավրիատի 4-րդ կուրս

Լիլիթ Արմենի Բակունց – բակալավրիատի 4-րդ կուրս

Մերուժան Արմենի Հայկյանց - բակալավրիատի 4-րդ կուրս

Լուսինե Դավիթի Հախվերդյան – մագիստրատուրա 1-ին կուրս

Լիլիթ Վրույրի Վարդանյան - մագիստրատուրա 2-րդ կուրս

6. ԼՍԵՑԻՆ. Ընթացիկ հարցեր:

6.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Մեթոդական խորհրդի միջնորդությունը «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի միջնորդությամբ Սամվել Դիլբանդյանի, Արտակ Ասատրյանի, Արմեն Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Արա Զոհրաբյանի, Արմեն Հայկյանցի, Մանե Կարապետյանի, Վահագն Գրիգորյանի, Լյուդվիգ Դավթյանի հեղինակած «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը որպես ուսումնական ձեռնարկ տպագրության երաշխավորելու վերաբերյալ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Սամվել Դիլբանդյանի, Արտակ Ասատրյանի, Արմեն Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Արա Զոհրաբյանի, Արմեն Հայկյանցի, Մանե Կարապետյանի, Վահագն Գրիգորյանի, Լյուդվիգ Դավթյանի հեղինակած «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունը երաշխավորել տպագրության որպես ուսումնական ձեռնարկ:

Խորհրդի նախագահ ***Հ.Խաչիկյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ՝
‹‹Քրեական արդարադատություն և փաստաբանություն››
մագիստրոսական կրթական ծրագրի
2023-2024 ուս.տարվա շրջանավարտների մագիստրոսական թեզերի
պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ **‹‹Քրեական արդարադատություն և փաստաբանություն››** մագիստրոսական կրթական ծրագրի 2024-2025 ուս. տարվա ընդհանուր թվով **22** շրջանավարտների մագիստրոսական թեզերի՝ 2025 թվականի փետրվարի 4-ին և 5-ին կայացած պաշտպանությունների արդյունքները, ընդհանուր առմամբ, վկայում են շրջանավարտների պատշաճ գիտական պատրաստվածության մասին:

Մասնավորապես՝ ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող արդյունքներով՝

ԱՌԿԱ	***ուսանող***	***գերազ. (18-20)***	***լավ (14-17)***	***բավ. (10-13)***	***անբավ. (0-9)***	***չներկ.***
Քրեական իրավունքի ամբիոն	10	4	6	-	-	-
Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն	12	11	1	-	-	-
Ընդամենը	**22**	**15**	**7**	**-**	**-**	**-**

Ներկայացված արդյունքներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից ***‹‹գերազանց››*** գնահատական է ստացել **68,1%**-ը, ***‹‹լավ››***՝ **31,9%**-ը, իսկ ***‹‹բավարար››*** և ***‹‹անբավարար››*** գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացած ուսանողներ չեն եղել:

Մասնավորապես՝ ‹‹Քրեական իրավունք››-ից մագիստրոսական թեզ պաշտպանած **10** շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է ‹‹20››, երկուսը՝ ‹‹19››, մեկը՝ ‹‹18›› մեկը՝ ‹‹17›› միավոր, երեքը՝ ‹‹16››, երկուսը՝ ‹‹15›› միավոր:

Հետևաբար, տվյալ առարկայից միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է ‹‹17,1›› միավոր:

‹‹Քրեական դատավարություն››-ից մագիստրոսական թեզ պաշտպանած **12** շրջանավարտներից 4 շրջանավարտ գնահատվել է ‹‹20››, երեք շրջանավարտ գնահատվել է՝ ‹‹19››, չորսը՝ ‹‹18››, և մեկ ուսանող՝ ‹‹17›› միավոր:

Հետևաբար, տվյալ առարկայից միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է ‹‹18,83›› միավոր:

Արդյունքների ամփոփման հիման վրա կարելի գալ այն եզրահանգման, որ Քրեական իրավունքի, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի և մագիստրոսների կողմից բարեխիղճ և արդյունավետ աշխատանք է կատարվել մագիստրոսական թեզերի պատրաստման, պաշտպանությանը նախապատրաստվելու և այն իրականացնելու համար:

Նշվածի մասին է վկայում հատկապես այն, որ աշխատանքներում հիմնականում ներկայացված էին մագիստրոսների սեփական ուսումնասիրությունների արդյունքները և դրանց վերաբերյալ կատարված սեփական եզրահանգումները, ինչպես նաև վեր էին հանվել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայում առկա բացերը, տարամեկնաբանությունները և ներկայացվել էին դրանց կատարելագործմանն ուղղված առաջարկություններ: Բացի այդ, աշխատանքներում անդրադարձ էր կատարվել նաև արտասահմանյան երկրների օրենսդրությանը, միջազգային փաստաթղթերին և պրակտիկային:

Հարկ է նշել նաև, որ մագիստրոսները տիրապետում էին նյութին և կարողանում էին ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, ինչպես նաև սպառիչ և/կամ բավարար կերպով պատասխաններ տալ հանձնաժողովի անդամների հարցերին:

Այս առումով պետք է նշել նաև, որ մագիստրոսական թեզերի վերաբերյալ գիտական ղեկավարների կարծիքները և ներկայացված գրախոսականները համապատասխանում էին ներկայացվող չափանիշներին:

Հարկ է արձանագրել, որ մագիստրոսական աշխատանքներում հիմնականում ներկայացված էին թեմայի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի և/կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, սակայն, ցանկալի կլիներ, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալ-վող դիրքորոշումներին:

Բացի այդ, ցանկալի կլիներ, որպեսզի մագիստրոսական աշխատանքներում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներից և/կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներից բացի ներկայացվեին ՀՀ իրավակիրառ պրակտիկայում կոնկրետ դեպքերի կամ գործերի վերաբերյալ հետազոտություններ:

Այդ առումով, ավելի արդյունավետ կլինի հատկապես գիտական ղեկավարների կողմից այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի մագիստրոսները հնարավորություն ունենան ծանոթանալ իրենց կողմից կատարված հետազոտությանն առնչվող պրակտիկ նյութերին:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին հաջողվել է ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառույթները: Ընդ որում՝ հատկանշական է, որ մագիստրոսական թեզերի և դրանց պաշտպանության գնահատումները որոշվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև գիտական ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ ի օգուտ մագիստրոսի:

Ամփոփիչ ատեստավորման
հանձնաժողովի նախագահ **Մ.Պապոյան**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի կողմից կատարված աշխատանքների մասին

1.Գիտահետազոտական աշխատանքներ

Ամբիոնի անդամների կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է 9 գիտական հոդված:

1. Владимир Оганесян - Влияние межгосударственных отношений на функционирование международного права //Публично-правовое обозрение. 2024.№ 2. С.45-57.

2. Արտակ Ասատրյան – Խորհրդարանական լսումները որպես հանրային քննարկման իրականացման ձև, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն», 2024 Vol. 15 No. 1 (40), էջեր 137-149:

3. Սերգեյ Ղազինյան - «National Monitoring Mechanisms on Action Against Trafficking in Human Beings:» «Պետություն և իրավունք» N 3(97) 2023, էջեր 176-189:

4. Ֆիլիանա Բելլույան – Միակողմանի տնտեսական սանկցիաների իրավաչափության հիմնախնդիրները, Պետություն և իրավունք, № 1 (98), 2024, էջեր 134-145:

5. Սիրանուշ Գրիգորյան - «Պլանավորած Ռազմավարություններ՝ չնախատեսված հետևանքներ», «Պետություն և իրավունք» Vol. 97 No. 3 (2023), էջեր 190-207:

6. Սիրանուշ Գրիգորյան - «Պատժամիջոցները թվային դարաշրջանում. հավասարակշռություն անվտանգության և գաղտնիության միջև» «Տարածաշրջան և աշխարհ» 2024, No 4 (53), էջեր 45-51

7. Սիրանուշ Գրիգորյան - «Պատժամիջոցները դարերի ընթացքում. պատմական և իրավական հեռանկարները» «Գիտական Արցախ» No 2 (21), 2024, էջեր 9-18:

8. Սիրանուշ Գրիգորյան - «ԵՄ պատժամիջոցների ապագան. Արդյունավետություն, մարտահրավերներ և նկատառումներ», Դատական իշխանություն ապրիլ-հունիս 2024, էջեր 97-109

9. Սիրանուշ Գրիգորյան - «Տնտեսական պատժամիջոցների ազդեցությունը արդյունաբերական զարգացման վրա», «Գիտական տեղեկագիր» Vol. 2 No. 47 (2024), էջեր 83-97

Տպագրության հանձնված գիտական աշխատանքներ՝

Ամբիոնի վարիչ Ա. Ասատրյանը ներգրավված է եղել «Փաստաբանությունը ՀՀ-ում» դասագրքի հեղինակային խմբի մեջ, որի շրջանակներում մշակել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատների ներկայացման կարգին, դրանց ընդունելիության պայմաններին, Դատարանի իրավազորության և հարակից այլ հարցերին վերաբերող գլուխը, որը փաստաբանների համար օգտակար կլինի ՄԻԵԴ

գանգատներ ներկայացնելու պրակտիկան խորությամբ պատկերացնելու տեսանկյունից: Դասագրքի տեքստն ամբողջությամբ պատրաստվել է: Ներկայումս ընթանում են տպագրության նախապատրաստական աշխատանքները:

«Պետություն և իրավունք» գիտական հանդեսում տպագրության համար ներկայացվել են հետևյալ հոդվածները՝

Եղիշե Կիրակոսյան – Enforcing International Law Amid Constitutional Decline: Lacking Good Faith?

Անի Սիմոնյան – «Delocalisation of the Law and Policy on Geographical Indications: Cases of France and Armenia»

Ռոզա Առաքելյան – Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարման միջազգային կառուցակարգերը:

2. Մասնակցություն գիտաժողովներին և սեմինարներին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները և ասպիրանտները մասնակցել են 2024 թվականի դեկտեմբեր ամսին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների, հայցորդների տարեկան գիտաժողովին, որտեղ հանդես են եկել զեկուցումներով: Մասնավորապես, ամբիոնի դասախոսներից Անի Սիմոնյանը հանդես է եկել "Արբիտրաժային վարույթների առանձնահատկությունները, Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի օրինակով" վերտառությամբ զեկուցմամբ, ամբիոնի ասպիրանտներից Ռոզա Առաքելյանը հանդես է եկել «ՄԱԿ-ի կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որպես Արդարադատության միջազգային դատարանի վճիռների իրավական հիմք» վերտառությամբ զեկուցմամբ, ամբիոնի հայցորդներից Սիրանուշ Գրիգորյանը հանդես է եկել «Պատժամիջոցների ազդեցությունը երրորդ պետությունների վրա» վերտառությամբ զեկուցմամբ:

Ամբիոնի վարիչ Ա. Ասատրյանը մասնակցել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 30 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին, որի շրջանակներում հանդես է եկել «Հանրային ծառայության բարեվարքության համակարգի արդի հիմնախնդիրները» թեմայով զեկուցմամբ: Ա. Ասատրյանը մասնակցել է նաև 2024թ. դեկտեմբերի 19-ին ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղի կազմակերպած «Խորհրդարանական մշակույթը և էթիկան որպես պառլամենտարիզմի զարգացման և ամրապնդման գործոններ» խորագրով միջազգային խորհրդաժողովին, որի շրջանակներում հանդես է եկել «Պետության քաղաքականությունը հանրային ծառայության բարեվարքության խթանման ուղղությամբ և դրա ազդեցությունը խորհրդարանական էթիկայի վրա» վերտառությամբ ելույթով:

ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսական աջակցությամբ կազմակերպված «Փախստականների իրավունք» խորագրով 13-րդ ամառային դպրոցի շրջանակներում՝ ամբիոնի դասախոս Քնարիկ Վարդանյանը ներկայացրել է դասախոսություն «Փախստականների միջազգային իրավական պաշտպանության ձևավորման պատմությունը և փախստականի հասկացությունը՝ 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի համաձայն» վերտառությամբ:

Ամբիոնի դասախոսներից Սերգեյ Ղազինյանը 2024 թվականի դեկտեմբերի 3-ից 4-ը մասնակցել է Հայաստանի ամերիկյան համալսարանի և Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի գործակցության շրջանակում կազմակերպված «Մարդու իրավունքների հետազոտությունը Հայաստանում. արդի և նոր ձևավորվող հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովին, որտեղ «Մարդու իրավունքների և

արդարադատության առաջխաղացում. ներառական հասարակություններ, հաշվետվողականություն և սոցիալ-տնտեսական իրողություններ» թեմայով պանելային քննարկումը վարելիս ներկայացրել է իր ատենախոսության թեմայի շրջանակում իրականացված հետազոտության վերաբերյալ դիտարկումներ:

Դրանից բացի, ամբիոնի դասախոսներից մասնակցել են մի շարք գիտաժողովների, սեմինարների, որոնք անմիջականորեն առնչվել են նաև վերջիններս կողմից դասավանդվող առարկաներին: Մասնավորապես դրանց շարքում առանձնացնենք հետևյալները՝

1. International Arbitration Summer School, Resolve Academy, Yerevan June 2024
2. ArBmenia International Conference, AMCA/Resolve Academy, Yerevan July 2024
3. Second Annual Armenian International Arbitration Conference, Yerevan 2024
4. Introduction to English Common Law, Queen Mary University of London, May 2024
5. International Treaty Law: Challenges and Controversial Approach, City University London, January 2024
6. Վերականգնողական միջամտությունների և նորարական տեխնոլոգիաների միջոցով հանցագործությունների կանխման և պրոբացիոն համակարգերի արդյունավետ կառավարում, Եվրոպայի Խորհուրդ, հունիս 2024, Երևան

Ամբիոնի անդամները միջազգային իրավական տարաբնույթ խնդիրների վերաբերյալ մեկնաբանություններ են ներկայացրել տարբեր լրատվական կայքերին և հեռուստաընկերություններին, մասնավորապես Արմենիա ԹիՎի, ABC media, Հանրային Ռադիո և այլ ընկերություններին:

3. Ուսումնական գործունեություն, ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Ուսումնական պլան, ուսումնական ծրագրեր

Ամբիոնի անդամները դասավանդել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում, ԵՊՀ Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, և հանրապետության այլ բուհերում :

բ) Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործում, նոր եղանակների ներդրում.

Նոր բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրի ներդրմամբ պայմանավորված վերանայվել են առարկայական ծրագրերի բաղադրիչները և դրանց գնահատման ձևաչափերը:

Որոշ առարկաների դասավանդման ընթացքում ներդրվել է նաև դիդակտիկ նյութերի ներկայացման միջոցով դասախոսության թեմաների քննարկման մեթոդը: Դրան մեծապես նպաստել է լսարանները անհրաժեշտ մոնիտորներիով կահավորելը:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, թեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում.

Կրկնություններից խուսափելու և պրակտիկ փոփոխություններով պայմանավորված փոփոխություններ են կատարվել նաև ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների հարցաշարերում և թեստային առաջադրանքներում: Որոշ առարկաների հետ կապված մշակվել և ներդրվել են թեստեր:

դ) Մեթոդական աշխատանք

Ամբիոնի անդամների վերապատրաստման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման առաջատար մեթոդիկաների ուսումնասիրությանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասավանդման մեթոդիկայի բարելավումն ու նոր մեթոդների կիրառումը: Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացման արդյունքում մի շարք առարկաների ընթացիկ քննություններն իրականացվել են հետազոտական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության ձևով:

Նկատի ունենալով, որ կրեդիտային համակարգի պայմաններում կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կատարումը, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը որակով և ժամանակին պաշտպանության ներկայացնելու նպատակով ամբիոնն այդ ուղղությամբ ձեռնարկել է որոշակի աշխատանքներ: Հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել ուսանողների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստման և ընթացիկ հարցերում:

Միևնույն ժամանակ, կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հետազոտական աշխատանք կատարող ուսանողները տեղյակ չեն եղել համալսարանի գրադարանի ընձեռած հնարավորություններից և հաճախ բախվել են գրականության հայթայթման հետ կապված խնդիրների: Ուսանողների հետ հանդիպումների շրջանակներում ամբիոնի դասախոսները պարբերաբար տեղեկացրել են այդ հնարավորությունների մասին, ինչը մեծապես կարող է նպաստել որակապես այլ հետազոտական աշխատանքների իրականացմանը:

4. Գիտական նստաշրջանի կազմակերպում և մրցույթների մասնակցություն.

Ամբիոնը ակտիվ ներգրավվածություն ունի միջազգային դատախաղերի կազմակերպմանը և անցկացմանը, որին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

ՈՒԳԸ նախաձեռնությամբ անցկացվել է սեմինարների շարք ՄԻԵԴ պրակտիկայի և նախադեպային իրավունքի թեմաներով: Առաջիկայում ևս նախատեսվում է անցկացնել սեմինար-քննարկում «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ազդեցությունը ՀՀ իրավական համակարգի վրա» վերտառությամբ:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում կազմակերպվել է սեմինար-քննարկում, որի շրջանակներում ամբիոնի դասախոսներից Քնարիկ Վարդանյանը հանրապետության տարբեր բուհերի ուսանողների համար ներկայացրել է փախստականների իրավունքների պաշտպանությանը նվիրված դասախոսությունների շարք:

Բացի այդ, Կոմիտեի հետ ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում նախատեսվում է ամբիոնի և ֆակուլտետի ակտիվ համագործակցություն Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի կրթահետազոտական հարթակին, որի հիմնական նպատակն է խթանել ՄՄԻ-ի և իրավունքի հարակից ճյուղերի վերաբերյալ ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները Հայաստանում:

Հուլիսի 1-ից 3-ը Ծաղկաձորի ԵՊՀ հյուրատանը տեղի ունեցավ ամբիոնի կողմից կազմակերպված «Միջազգային իրավունքի արդի հիմնախնդիրները» խորագրով միջբուհական ամառային դպրոցը:

Ամառային դպրոցին մասնակցում էին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, Ռուս-հայկական սլավոնական համալսարանի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, ՆԳՆ կրթահամալիրի, Հայաստանի մանկավարժական համալսարանի և Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողներ և դասախոսներ: Ամառային դպրոցի օրակարգում ներառված էին միջազգային իրավունքի ժամանակակից խնդիրներ,

որոնց վերաբերյալ ներկայացվեցին բովանդակալից զեկուցումներ, տեղի ունեցան ակտիվ քննարկումներ և ինտերակտիվ շփումներ:

Ամառային դպրոցի շրջանակներում քննարկվել են միջազգային ներդրումային վեճերի կարգավորման խնդիրները, արբիտրաժային իրավունքի և վեճերի լուծման այլընտրանքային եղանակների հիմնախնդիրներ, ՀՀ կողմից ՄԻԵԴ ներկայացված միջպետական գանգատների հեռանկարները, բռնի տեղահանված անձանց միջազգային իրավական պաշտպանության հարցերը, միջազգային իրավական ճանաչման, հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային իրավական խնդիրները, միջազգային քրեական դատարանի իրավազորության հետ կապված խնդիրները և այլ հարցեր:

Նկատի ունենալով խիստ դրական արդյունքները և մասնակիցների ոգևորությունը՝ նախատեսում ենք ամառային դպրոցը դարձնել ամենամյա՝ ընդլայնելով մասնակից բուհերի շրջանակը՝ ներգրավելով այդ թվում նաև մարզային բուհեր:

Հայկական միջազգային իրավունքի միության ներկայացուցիչների հետ կայացած քննարկման արդյունքում ձեռք է բերվել համագործակցության խորացման պայմանավորվածություն՝ միջազգային դատախաղ մրցույթներին մասնակցության գործընթացն առավել համակարգված կազմակերպելու նպատակով:

5. Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Առանձին դասընթացների շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային և ներպետական դատական ատյանների պրակտիկ գործեր, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ և այլն: Միջազգային պրակտիկայի կիրառման վերաբերյալ մի շարք հարցեր ընդգրկված են նաև քննական տոմսերում:

Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ՄԻԵԴ Մեծ պալատի պրակտիկային՝ նախադեպային իրավունքի զարգացումները դասավանդման շրջանակներում ներկայացնելու համար:

Դասախոսները և ասպիրանտները ներգրավված են նաև պրակտիկ աշխատանքներում, որոշ դեպքերում՝ իրենց կողմից դասավանդվող առարկաների հետ ուղղակի առնչություն ունեցող, որը նպաստում է նաև դասավանդման պրոցեսում պրակտիկ նյութի մատուցմանը:

6. Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Եվրոպական և միջազգային իրավունք մասնագիտացման շրջանակում ընդգրկված դասընթացների մեծ մասը ապահովված է հայալեզու գրականությամբ: Որոշ դասագրքեր և նյութեր վերանայման և արդիականացման անհրաժեշտություն ունեն: Ներկայումս ամբիոնում քննարկվում է «Միջազգային իրավունք» առարկայի նոր դասագրքի մշակման հարցը: Այս ուղղությամբ արդեն իսկ մեկնարկել են դասագրքի հեղինակային խմբի ձևավորման աշխատանքները: Դասագրքի մշակման աշխատանքները ակտիվացնելու ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվում հեղինակների վարձատրության համար ֆինանսական միջոցների հայթայթման ուղղությամբ, ինչը կարևոր խթան կարող է լինել աշխատանքների արագացման համար:

Հետևում ենք նաև մասնագիտական գրականության և տարաբնույթ ուղեցույցների արդի հրապարակումներին՝ դրանք ուսումնական նյութերի շարքում ներառելու նպատակով:

7. Գիտամանկավարժական կադրեր, կադրերի պատրաստում և վերապատրաստում

Հաշվետու շրջանում ամբիոնում դասավանդել են 26 դասախոսներ՝ 5-ը հիմնական, 5-ը արտաքին համատեղությամբ, 16-ը՝ ժամավճարային հիմունքներով:

Ներկայումս ուսանում է 1 առկա ասպիրանտ, 1 հեռակա ասպիրանտ և 1 հայցորդ:

Նկատի ունենալով միջազգային արբիտրաժներում Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված հայցերը՝ ամբիոնը այդ ատյաններում վարույթների գիտական ուսումնասիրության համար ասպիրանտուրայի մեկ տեղի հայտ է ներկայացրել:

Ամբիոնի կողմից դասավանդվող հիմնական դասընթացների գործնական պարապմունքներն անցկացնում են ամբիոնի դասախոսները, սակայն շարունակական աշխատանքներ են իրականացվում ասպիրանտներին և ամբիոնի հայցորդին ևս գործնական պարապմունքներին ներգրավելու համար:

Նախկին ասպիրանտներից հանձնել են մասնագիտական մինիմումները: Ներկայումս աշխատում են թեկնածուական ատենախոսությունների վրա:

8. Ամբիոնի անդամների արտահամալսարանական գործունեություն

Ամբիոնի որոշ անդամներ դասավանդում են նաև հանրապետության այն բուհերում: Մասնավորապես, ամբոնի վարիչ Ա. Ասատրյանը դասավանդում է նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ Իրավագիտություն, Հանրային կառավարում, Պետական կառավարում, Հանրային ֆինանսների կառավարում մագիստրոսական ծրագրերի շրջանակներում: Բացի այդ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի շարունակական կրթության վարչության կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացների շրջանակներում Ա.Ասատրյանը տարբեր հանրային ծառայողների համար նախատեսված վերապատրաստման ծրագրերի շրջանակներում մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավմանն ուղղված մի շարք դասախոսություններով է հանդես գալիս:

Ամբիոնի դասախոսներից Սերգեյ Ղազինյանը դասավանդում է Հայաստանի Հայաստանի ամերիկյան համալսարանում բակալավրիատի տարբեր ծրագրերի ուսանողների համար հաշվետու տարվա երկու կիսամյակներում դասավանդել է «Հանրային շահերի պաշտպանություն» (“Public Advocacy”), «Հայաստանի կառավարության հիմունքներ» (“Introduction to Armenian Government”) և «Մարդու իրավուքների հիմունքներ» (“Introduction to Human Rights”) առարկաները:

Ամբիոնի հայցորդ Սիրանուշ Գրիգորյանը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում դասավանում է «Իրավունքի հիմունքներ» առարկան:

Ամբիոնի դասախոսները տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ակտիվորեն ներգրավված են նաև որպես փորձագետներ, որի արդյունքում մեծածավալ աշխատանք են իրականացնում նաև կրթական օժանդակ նյութերի մշակման և ոլորտային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ:

Ամբիոնի վարիչ Ա.Ասատրյանի կողմից «Հայաստան Բարեվարքություն» ծրագրի միջոցով քաղաքացիական ծառայողների համար մշակվել է «Բարեվարքություն» կրթական մոդուլը և պետական մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթացներ, որտեղ հեղինակի կողմից ներկայացվել է կրթական մոդուլի բովանդակությունը և դրա գործնական կիրառման հեռանկարները:

ԱՄՆ պետքարտուղարության ֆինանսավորմամբ ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համագործակցությամբ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից

իրականացվող «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ» ծրագրի շրջանակներում ամբիոնի դասախոս Քնարիկ Վարդանյանը որպես փորձագետ մշակել է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը համապատասխան գերատեսչությունների կողմից և հանրային քննարկումների արդյունքում ներկայացված մեկնաբանությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակվել է և ներկայացվել ՀՀ կառավարությունում:

Ամբիոնի դասախոսներից Սերգեյ Ղազինյանը որպես ԳՐԵՏԱ-ի շրջանակում ձևավորված աշխատանքային խմբի անդամ, մշակել է «Մարդկանց թրաֆիքինգի զոհերի վերականգնման և արձագանքի ժամանակահատվածի իրավունք կիրառման վերաբերյալ» ուղեցույցը:

Տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի, Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Միավորված ազգերի զարգացման գործակալության, Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտը, Վորլդ վիժն կազմակերպության, Դեմոքրասի ինթերնեյշնլ կազմակերպության հետ համագործակցությամբ ամբիոնի դասախոս Սերգեյ Ղազինյանն իրականացրել է մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող առանձին թեմաներով վերապատրաստման դասընթացներ տարբեր մասնագետների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար:

9. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն

2024թ. մայիսի 23-ին, 24-ին տեղի են ունեցել առկա ուսուցման բակալավրիատի «Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝ 31 ուսանող, որից 14-ը գնահատվել են բավարար, 13-ը՝ լավ, 4-ը՝ գերազանց:

2024թ. հունիսի 12-ին տեղի է ունեցել հեռակա ուսուցման բակալավրիատի «Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝ մասնակցել է 9 ուսանող, որոնք բոլորը ստացել են բավարար:

2024թ. փետրվարի 4-ին տեղի է ունեցել «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» ծրագրով առկա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝ 6 մագիստրոս, որոնցից 3-ը՝ ստացել են գերազանց, 3-ը՝ լավ գնահատական:

Ներկայումս ամբիոնի «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական ծրագրում ներգրավված է 11 ուսանող առաջին կուրսում:

Միջազգային կապերի հաստատում և ընդլայնում.

«Էրազմուս+» դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակներում Լեհաստանի Բելիստոկի համալսարանի իրավագիտության ֆակուլտետից դասախոս է ժամանել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, որի շրջանակներում հանդես է եկել Եվրոպական միության մրցակցային իրավունքի կարգավորումներին նվիրված դասախոսությունով:

«Էրազմուս+» դասախոսների փոխանակման ծրագրի շրջանակներում ամբիոնի դասախոսներից Անի Սիմոնյանը մասնակցել է մրցույթի և ստացել Մասարիկի համալսարանի իրավագիտության ֆակուլտետում Միջազգային իրավունք կարճաժամկետ դասընթացը դասավանդելու հրավերի դրամաշնորհ (Բռնո, Չեխիա, մարտ, 2025)

Շվեյցարիայի Ժնևի համալսարանից «Էրազմուս+» փոխանակման ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ում սովորող ուսանողի համար անգլերեն լեզվով ներկայացվում է փախստականների իրավական կարգավիճակի հետ կապված առարկայական ծրագիրը:

Ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ՝ **Ա.Մ.ԱՍԱՏՐՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ (ԱՌԿԱ) 2023-2025թթ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2025 թվականի փետրվարի 5-ին տեղի ունեցավ վերը նշված կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման գործընթացը:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 9 ուսանողներ, որոնցից 6 (վեց) ուսանող ստացել է *«գերազանց»* գնահատական, 2 (երկու) ուսանող՝ *«լավ»*, իսկ 1 (մեկ) ուսանող՝ «բավարար»:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացն իրականացվել է հրապարակայնորեն, առկա ձևաչափով՝ սահմանված պահանջների պահպանմամբ:

Հարկ է նկատել, որ թեմաների ընտրության ժամանակ հիմնականում հաշվի են առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն հիմնախնդիրները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական հարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտության տեսանկյունից հիմնականում առաջնահերթ և կարևոր նշանակություն ունեն: Այլ կերպ ասած՝ ընտրված թեմաներն իրապես եղել են արդիական, իսկ դրանցով գիտահետազոտական աշխատանք կատարելը՝ հիմնավորված:

Միաժամանակ հարկ է նշել, որ աշխատանքների զգալի մասը ու դրանց հրապարակային պաշտպանությունը առանձնանում էր աշխատանքների հեղինակների կողմից նյութին խորքային ձևով տիրապետելու, ինչպես նաև ուսանողների կողմից աշխատանքների ներկայացման բարձր մակարդակ դրսևորելու տեսանկյունից: Գերզանց գնահատական ստացած ուսանողներն աչքի էին ընկնում իրենց վերլուծական կարողություններով և տեսանելի էր այն, որ նրանք տիրապետում են իրենց թեմային առնչվող հիմնախնդիրներին և բավարար մակարդակով կարողանում են ներկայացնել և հիմնավորել իրենց եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնց մեջ, իհարկե, առկա էին նաև այնպիսիք, որոնք ընդունելի չէին Հանձնաժողովի անդամների կամ առնվազն մեծ մասի համար, սակայն դրանք բավարարում էին գիտական նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Այսինքն, աշխատանքների մեծ մասի դեպքում հեղինակների կողմից աշխատանքների ձևակերպման և ներկայացման որակը թույլ էր տալիս գալ այնպիսի եզրահանգման, որ ուսանողները նյութը տիրապետում են խորքային ձևով, ունեն հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ:

Միաժամանակ, առկա էին աշխատանքներ, որոնք զերծ չէին թերություններից, մասնավորապես՝ աշխատանքների ձևակերպման որակի տեսանկյունից, այդ թվում՝ կատարված չէին անհրաժեշտ վերլուծություններ և եզրահանգումներ, կատարված չէին ինչպես միջազգային փորձի, այնպես էլ՝ ներպետական իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություններ, աշխատանքներում առկա էին նաև մի շարք տեխնիկական թերություններ և բացթողումներ: Որոշակի դեպքերում էլ չէր ընդգծվում աշխատանքի կատարման ինքնուրույնության բարձր աստիճանը:

Բացի այդ, առկա էին նաև որոշ խնդիրներ հրապարակային խոսքի հետ կապված, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է ուսանողներին ներկայացնել նաև հպարակային պաշտպանության հմտությունները, ինչը, ընդ որում, գնահատման ինքնուրույն բաղադրիչ է նաև:

Առկա է նաև մտահոգություն առ այն, որ որոշ ուսանողներ ավարտական աշխատանքների կատարման գործընթացում ժամանակին ու ակտիվ կերպով չեն համագործակցել իրենց ղեկավարների հետ, ինչը կատարելը թույլ կտար հաղթահարել վերը նշված թերությունների զգալի մասը և ավարտական աշխատանքները կդարձներ առավել ամբողջական և բովանդակալից: Ընդ որում, սա շարունակական և համակարգային խնդիր է, որին հետագայում անհրաժեշտ է ավելի շատ ուշադրություն դարձնել:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ ավարտական աշխատանքները հիմնականում իրականացված էին այդ աշխատանքներին ներկայացվող բովանդակային և ձևական պահանջների պահպանմամբ: Ներկայացված գրախոսականները կատարված էին պատշաճ մակարդակով: Ավարտական աշխատանքների ղեկավարների և գրախոսողների մի մասը ներկա էին ամփոփիչ ատեստավորմանը, որոնք անձամբ ներկայացրեցին ավարտական աշխատանքների վերաբերյալ իրենց նկատառումները:

«Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն»
մագիստրոսական ծրագրով ամփոփիչ
ատեստավորման հանձնաժողովի նախագահ,
ի.գ.թ., դոցենտ,
Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր
Կարեն Ամիրյան

11.02.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ՝
‹‹Միջազգային դատարաններ և արբիտրաժ ››
մագիստրոսական կրթական ծրագրի
2024-2025 ուս. տարվա շրջանավարտների մագիստրոսական թեզերի
պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ **‹‹Միջազգային դատարաններ և արբիտրաժ››** մագիստրոսական կրթական ծրագրի («Ծրագրի») 2024-2025 ուս. տարվա ընդհանուր թվով **6** շրջանավարտների մագիստրոսական թեզերի՝ 2025 թվականի փետրվարի 4-ին կայացած պաշտպանությունների արդյունքները ընդհանուր առմամբ, վկայում են շրջանավարտների պատշաճ գիտական պատրաստվածության մասին:

Մասնավորապես՝ ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող արդյունքներով՝

ԱՌԿԱ	***ուսանող***	***գերազ. (18-20)***	***լավ (14-17)***	***բավ. (10-13)***	***անբավ. (0-9)***	***չներկ.***
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն	**6**	**3**	**3**	**-**	**-**	**-**
Ընդամենը	**6**	**3**	**3**	**-**	**-**	**-**

Ներկայացված արդյունքներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից ***‹‹գերազանց››*** գնահատական է ստացել **50%**-ը, ***‹‹լավ››՝*** **50%**-ը, իսկ ***‹‹բավարար››*** և ***‹‹անբավարար››*** գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացած ուսանողներ չեն եղել:

Մասնավորապես՝ Ծրագրի՝ մագիստրոսական թեզ պաշտպանած **6** շրջանավարտներից երկու շրջանավարտ գնահատվել են ‹‹19››, մեկը՝ ‹‹18››, մեկը՝ ‹‹17››, երկուսը՝ ‹‹16››: Հետևաբար, միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է ‹‹17,5›› միավոր:

Արդյունքները հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և Ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և մագիստրոսների կողմից բարեխիղճ և արդյունավետ աշխատանք է կատարվել ինչպես մագիստրոսական թեզերի մշակման, այնպես էլ հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու և այն իրականացնելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է փաստել, որ նշված աշխատանքներից մեծ մասում ներկայացված էին մագիստրոսների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա կատարված եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ

պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Շրջանավարտները քաջատեղյակ էին ոչ միայն գործող իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող խնդրահարույց, տարակարծիք մեկնաբանություններ առաջացնող խնդիրներից և շրջանառության մեջ դրված համապատասխան կարգավորումներից: Աշխատանքներում կատարվել էր միջազգային օրենսդրության և պրակտիկայի վերաբերյալ վերլուծություն:

Հարկ է նշել նաև, որ մագիստրոսները տիրապետում էին նյութին և կարողանում էին հստակ ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, ինչպես նաև սպառիչ կամ բավարար կերպով պատասխաններ տալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների հարցերին:

Մագիստրոսական թեզերի վերաբերյալ գիտական ղեկավարների կարծիքները և գրախոսականները համապատասխանում էին ներկայացվող չափանիշներին:

Աշխատանքների մեծ մասում ներկայացված էին իրավակիրառ պրակտիկայի նյութերը և դրանց վերլուծության արդյունքները: Մագիստրոսները գլխավորապես օգտվել էին Արդարադատության միջազգային դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներից, միջազգային արբիտրաժային տրիբունալների կայացրած արբիտրաժային վճիռներից: Որոշ աշխատանքներում, մասնավորապես «լավ» գնահատված աշխատանքներում, նկարագրական մասը գերակշռում էր: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե խնդրո առարկա հանդիսացող իրավական հարցերը և բացերը ավելի խորը ուսումնասիրության և վերլուծության ենթարկվեին: Աշխատանքներում գնահատվել է աշխատանքի հեղինակի ինքնուրույնությունը և խնդրի լուծմանն ուղղված վերջինիս ուրույն առաջարկները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին հաջողվել է ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառույթները: Հատկապես հարկ է նկատել, որ մագիստրոսական թեզերի և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև գիտական ղեկավարների ու գրախոսների կարծիքները հաշվի առնելով:

Ամփոփիչ ատեստավորման

հանձնաժողովի նախագահ **Ա. Խզմալյան**